АРТУР МКРТЧЯН. *Общественный быт армян Нагорного Карабаха (вторая половина XIX – начало XX вв.).* Ереван, издательство “Гитутюн” НАН РА, 2010, 168 с.

ԱՐԹՈՒՐ ՄԿՐՏՉՅԱՆ. *Լեռնային Ղարաբաղի հայերի հասարակական կենցաղը (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 168 էջ:*

ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտը, Լեռնային Ղարաբաղի կառավարության օժանդակությամբ, ռուսերեն լույս է ընծայել ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու, պետական գործիչ, Լեռնային Ղարաբաղի ազգային-ազատագրական շարժման ակտիվ մասնակից Արթուր Մկրտչյանի «Լեռնային Ղարաբաղի հասարակական կենցաղը» (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ) ուշագրավ մենագրությունը: Աշխատությունը տպագրվել է հեղինակի ծննդյան 50-ամյակի առթիվ: Այն տպագրության են պատրաստել պատմական գիտությունների դոկտորներ, ազգագրագետներ Լիլյա Վարդանյանը և Հարություն Մարությանը:

Ազգագրության նկատմամբ Ա. Մկրտչյանի հետաքրքրությունները ձևավորվել են Երևանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետում սովորելու տարիներին: Երկրորդ կուրսից նա հետաքրքրություն է ցուցաբերել հատկապես ազգագրության հանդեպ՝ ուսանողական արձակուրդներին մասնակցելով ազգագրական գիտարշավներին: Համալսարանում ստացած տեսական գիտելիքների և դաշտային, գիտագործնական աշխատանքների զուգակցմամբ, նա ձեռք է բերել ազգագրական գիտելիքների լայն իմացություն: Շրջագայելով Արցախի, Հայաստանի ամենատարբեր շրջաններ, նաև Դոնի Ռոստովի ու Նոր Նախիջևանի հայաբնակ գյուղերում, նա գրառում է ազգագրական բազմահարուստ և բազմաբովանդակ ազգագրական նյութեր: Նրա դիպլոմային աշխատանքը նվիրված էր Եր. Լալայանի ազգագրական գործունեությանը: Գիտագործնական և գիտահետազոտական աշխատանքների հանդեպ նրա հետաքրքրություններն առավելապես դրսևորվել են համալսարանն ավարտելուց հետո՝ աշխատանքի անցնելով Մարդարապատի ազգագրության թանգարանում: Ազգագրության մեջ խորանալու, գիտատեսական առավել լայն իմացություն և գիտելիքներ ձեռք բերելու նպատակով 1982 թ. նա ընդունվում է Մոսկվայի Միկլուխո-Մակլայի անվան ազգագրության և մարդաբանության ինստիտուտի ասպիրանտուրան՝ աշակերտելով առաջատար և ճանաչված ազգագրագետ – կովկասագետ Վ. Գ. Գարդանովին: Ուսանելու տարիներին՝ իր սանի մեջ տեսնելով գիտահետազոտական աշխատանք կատարելու մեծ ներուժ, անվանի ազգագրագետը հետևյալ կերպ է բնութագրել նրա գիտական կարողությունները. «Արթուր Մկրտչյանը օժտված է ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելու բացառիկ ընդունակություններով»: 1985 թվականից խորհրդային երկրներում, այդ թվում և Հայաստանում, ազգային ինքնագիտակցության վերարթնացման շրջանում, ազգային արժեքների վերարժեքավորման, վերագնահատման մի ինքնօրինակ շրջափուլ է սկսվում: Այդ շարժմանն արձագանքում է Ա. Մկրտչյանը, և անմիջապես մեկնում է Հադրութ ու ստանձնում տեղի գավառագիտական թանգարանի տնօրենի պաշտոնը: Ազգագրագետի մասնագիտական դիրքորոշմամբ ու նախաձեռնությամբ՝ նա ակ-

տիվ գործունեություն է ծավալում թանգարանային նոր նմուշների համալրման գործում: Ա. Մկրտչյանը հմտորեն զուգակցում է գիտակազմակերպչական աշխատանքները մշակութային-լուսավորական աշխատանքների հետ՝ թանգարանը դարձնելով ազգահայրենասիրական ոգին բարձրացնելու մի յուրօրինակ օջախ: Նա ազատագրված Արցախի Գերագույն խորհրդի առաջին նախագահն էր: 1992 ապրիլի 14-ին 33 տարեկան հասակում նա ողբերգական վախճան ունեցավ:

Ժամանակն ու կոնկրետ իրադարձությունն են Ա. Մկրտչյանի առջև դրել որոշակի խնդիրների առաջադրում ու լուծում: Պատահական չէ նրա՝ «Լեռնային Ղարաբաղի հասարակական կենցաղը» թեմայի ընտրությունը: Լեռնային Ղարաբաղն իր յուրահատուկ պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, էթնոմշակութային յուրահատկություններով առանձնանում է Հայաստանի ազգագրական այլ շրջաններից: Աշխատության հիմքում ընկած են՝ ինչպես հեղինակի կողմից 1983-1987 թթ. Մարտունու, Հադրութի, Մարտակերտի, Ասկերանի շուրջ 12 գյուղերից գրառած ազգագրական նյութերը, այնպես էլ արխիվային ու ձեռագիր բազում սկզբնաղբյուրներ: Հայ ժողովրդի հասարակական կենցաղի ուսումնասիրությունը միշտ էլ գտնվել է ազգագրագետների ուշադրության կենտրոնում, սակայն առաջին անգամ Ա. Մկրտչյանն է անդրադարձել Լեռնային Ղարաբաղի հասարակական կենցաղի տարաբնույթ կողմերի վերհանմանն ու լուսաբանմանը: Նա իր առջև նպատակ էր դրել խորազնին ուսումնասիրել Լեռնային Ղարաբաղի ներհամայնքային և միջհամայնքային հարաբերությունները, համայնքի ներսում կատարված տարաբնույթ տեղաշարժերը:

Աշխատության առաջին էջերում գիրքը տպագրության պատրաստողներ Լ. Վարդանյանը և Հ. Մարությանը համակողմանի լուսաբանում են հեղինակի՝ Ա. Մկրտչյանի ազգագրական, պետական-հասարակական գործունեությունը, ինչպես և մաքառումներով առլեցուն, ցավոք, կարճատև նրա կյանքի ուղին: Աշխատությունը կազմված է ներածականից, 4 գլուխներից և ամփոփումից: Աշխատանքի վերջում ներկայացված է նաև անգլերեն ամփոփում: I գլխում ներկայացված է XIX դ. վերջին և XX դ. սկզբին Լեռնային Ղարաբաղի էթնիկական և սոցիալ-տնտեսական կենցաղի ընդհանուր բնութագիրը: Հիշյալ գլուխը նվիրված է, մասնավորապես, ազգաբնակչության էթնիկական կազմին և տարաբնակեցման խնդիրներին, պատճառներին, տնտեսության հիմնական ոլորտներին, միջէթնիկական հարաբերություններին: II գլխում հեղինակը անդրադառնում է համայնքի կազմին, համայնքի կառավարման մարմիններին, փոքր և մեծ ընտանիքներին (գերդաստան), ընտանեկան-ազգակցական խմբերի կարևորությանը հասարակական կենցաղի համակարգում, ինչպես և ընտանեկան-դրացիական հարաբերություններին: III գլխում հետազոտության հիմնական բնագավառը համայնքի հասարակական կենցաղում ոչ պակաս կարևորություն ներկայացնող հետևյալ ոլորտների քննությունն է. բնակեցման սահմանները, բնակեցման ձևավորման մի քանի առանձնահատկությունները, պաշտամունքային վայրերն ու կառույցները: IV գլխում ուսումնասիրության առարկա են սովորույթներն ու բարքերը, օրացուցային տոները, հյուրասիրությունը, միջէթնիկական հարաբերությունները:

Ա. Մկրտչյանի «Լեռնային Ղարաբաղի կենցաղը» (XIX դ. երկրորդ կես – XX դ. սկիզբ) արժեքավոր աշխատությունն իր գիտատեսական, գիտագործնական կարևորությամբ առաջին լուրջ փորձերից է՝ առանձին տարածաշրջանի հասարակական կենցաղի յուրահատկությունները գիտագործնական և գիտատեսական հիմնավորումներով լուսաբանելու առումով: Աշխատությունը հայ ազգագրության պատմության մնայուն արժեքներից է:

ՍՎԵՏԼԱՆԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ